№ 275 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւն շաբաթ է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 275

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թուրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միենոյն ժամանակ 40 կոպ. նամակադրոշմ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Առաջիկայ 1911 թուականի

II ՏԱՐԻ **ԱՐՕՐ** II ՏԱՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿ. ԵՒ ԽԱՂԱՂԱՄԻՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

«ԱՐՕՐԸ» հրատարակվելու է Թիֆլիսում, խմբագրութեամբ Հ. Առաքելեանի և աշխատակցութեամբ ռուսահայ, թիւրքահայ և պարսկահայ գրողների։

«Արօրին» աշխատակցելու են՝

Ա. Այսօյաճեան, Ա. Աթանասեան, բժշկ. Աղասարեան Բ., Ատրուշան, բժշկ. Արծրունի Վ., Առաքելեան Արշակ, Աթաբէգեան Մ., Բաբգէն եպիսկոպոս Կիւլէսէրեան, Բաշալեան Լեոն, Բաշինջաղեան Դ., Բարայեան Ֆ., Դասպարեան Յարութիւն, դօքտօր Դրէնֆիլդ Զէմս, Յ. Գենջեան, Դանիէլեան Լ., Դը-Գուբերնատիս Անջէլօ, սենատոր (իտալական պրոֆ.), Եղեկեան Ա., Եսայեան Ս., Զաքարեան Պետրոս, Էմմանուէլ ք. Նազարեան, Թեքէեան Վ., բժշկ. Թիրեաքեան Յարութիւն խան, Խան-Ազատ Ռ., Խուրշիդ, Կալիաս, Կրասիլնիկեան Կ., Ղուլեան Ա., Մալխասեան Ս., Մալխազեան Ա., Մաքլէր Ֆ. (ֆրանսիացի հայագէտ), Մեսրոպ ք. Մելեան, Յարութիւնեան Ի., Նաթանեան Միք., Նալբանդեան Ա., Նամալեան, բժշկ. Շահազեան Ա., բժշկ. Շեխեան Ա., Շահրիար, Զալիուշեան Դ., Զախմախսազեան Յ., Սարուխան Ա., Սուքիասեան, Սամուէլեան Խ., Սպէնդիարեան Յ., պրոֆէսօր Վեսելովսկի Ի., Տէր-Մինասեան Երուանդ, Ռօֆֆօր Ստ., Քալանթար Ա.։

«ԱՐՕՐԸ» ձգտելու է դառնալ հանրամատչելի, ժողովրդական ամսագիր ամենի համար, տալ հայ ժողովրդին առողջ, թարմ, մտաւոր և հոգեւոր սնունդ, դիտել հայկական իրականութիւնը և առանց հաշտվելու նրա հետ, անդադար պայքարել, կռուել գիտութեան և գեղարուեստի միջոցով սոսկութեան, աղտեղութեան հետ, որոնցով այսօր համակված է հայկական կեանքը։ Վերածնութիւն հայկական կեանքի, մտաւոր և բարոյական—ահա «ԱՐՕՐԻ» ձգտումներից մինը։ Ժողովրդականացումն գիտութեան—ահա «ԱՐՕՐԻ» մի այլ ձգտումը. սերմանումն հայ ժողովրդի մէջ համամարդկային գաղափարների, խաղաղասիրութեան, եղբայրական և մարդկային համերաշխութեան—ահա «ԱՐՕՐԻ» երրորդ ձգտումը։

«Ա ր օ ր ը» տպագրելու է ամեն մի համարում գոնէ երկու ամբողջական յօդուածներ՝ գլխաւորապէս կենսագրական և գիտական բովանդակութեամբ, որոնցից բաժանորդները կարողանան կազմել առանձին բրօշիւրներ և այդպիսով տարվայ ընթացքում ունենան գոնէ 24 ՀԱՏ ԳՐՔՈՅԿՆԵՐ։

Կամենալով հնարաւորութիւն տալ Թիւրքահայ և Արևմտեան հայ գրողներին մասնակցել «Ա ր օ ր ի ն» և դրանով գրական և մասաւոր սերտ յարաբերութիւններ ստեղծել արևելեան և արևմտեան հայ գրական գործիչների միջև, «Ա ր օ ր ը» հրատարակվելու է հայկական հին, այն է ընդհանուրից ընդունված ուղղագրութեամբ։ Սակայն նրա էջերը բաց են լինելու և Վ-ի ուղղագրութիւն քարոզողների առաջ։

«Ա ր օ ր ը» աշխատելու է ասպարէզ քաշել երիտասարդ, թարմ, սկսնակ ոյժերը և ղեկավարել նրանց գրական գործունէութիւնը։

«Արօրի» բաժանորդագինն է «Մշակի» բաժանորդների համար 4 ր., ոչ-բաժանորդները վճարում են 2 ր. աւելի։

Եւրոպա 20 ֆրանկ, «Մշակի» բաժանորդների համար 16 ֆրանկ։

Դրամ և թղթակցութիւն ուղարկել այս հասցէով՝

Тифлисъ, редакція журнала «АРОРЪ».
Tiflis, Rédaction du la Revue arménienne «Aror».
Թիֆլիս, «Արօր» ամսագրի խմբագրութիւն։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. Խորհուրդը

հրաւիրում է պ. պ. անդամներին Ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որ կայանալու է շաբաթ, դեկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 7-ին Ընկերութեան դահլիճում—Աբաս-Աբադեան հրապարակ սեփ. տ. № 7 (Абасъ-Абадская пл. № 7 с. д.), որտեղ քննվելու և հաստատվելու են կենտրոնի և ճիւղերի 1911 թ. նախահաշիւները, Աղքատախնամ Մասնաժողովի կանոնները և Ընկ. 30-ամեայ գոյութեան տօնելը։

առ. 1371. 1—1



ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ
Ա. ՌԵՒՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

Լուսանկարչական թաժին

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ԹՂԹԵՐ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՏԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

«ԲԻՒՏԷՆ», «ԳՐԱՎԻՒՐ» և «ՕՊԱԼ». տալիս են լաւագոյն հետևանքներ։ Թղթեր փաթեթներով և բացիկներ ՐԻԻԿՕ։ Գործիքներ՝ ցերեկով թաղանթներին (пленки) արտայայտութիւն տալու համար։

1365. 1—1

ՆԵՐԿ. 15. ԱԲՕՆԵՄԵՆՏԻ ՀԱՇԻՒՑ ԴՈՒՐՍ

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Ուրբաթ, դեկտեմբերի 10-ին

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ՐՕՄԷՕ ԵՒ ՋՈՒԼԻԷՏ

Ողբերգութիւն 5 արար., Շէքսպիրի, թարգմ. Յ. խ. Ֆասէհեանի։

Մասնակցում են. տ. տ. Ադամեան, Աշխէն, Զաբէլ, Ժասմին, Յասմիկ, պ. պ. Ալլահվերդեան, Աւետեան, Զարիֆեան, Ղազարեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Շահխաթունի, Ռշտունի, Փիրումեան և ուրիշ.։

Գլխ. բէժիսեօր՝ Ա. Արմէնեան

Սկիզբը երեկոյեան ժամը հինգ 8-ին է։

Վարչութեան հերթապահ անդամներ՝ Տ. Յովհաննիսեան, Վ. Մամուրեան

տա. 1369. 1—1

Հինգշաբթի, դեկտեմբերի 9-ին Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան շինութեան մէջ

նշանակված է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍ. ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Օրակարգ. 1) Զեկուցումներ Ա. Բարխուդարեանի և Ս. Մանասեանի թաչնաբուծութեան փորձերի մասին՝ Լօռում և Գանձակի շրջանում։ 2) Զեկուցում վարչութեան։

Սկիզբը երեկ. ժամը 7-ին։ Կարող են ներկայ լինել նաև հիւրեր։ տա. (ա.օ.) 1366. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 9-ին

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

կը ներկայացնէ

ՅԻՄԱՐ

Կատակերգ. 4 արար., Ֆուլդայի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի։

Գլխ. բէժիսեօր՝ Ա. Արմէնեան

Ներկայացման սկիզբը երեկ. ճիշդ ժ. 8-ին։

Ներկայացումից յետոյ ՊԱՐԵՐ (Եւրօպական և կովկասեան)

Հիւրերը մուտքի համար վճարում են 50 կ.։

Ներկայացման տոմսակները՝ 25—75 կ. արժող։

1363. 1—1

Отдаю въ АРЕНДУ

УЧАСТОКЪ ЗЕМЛИ

находящейся въ чертѣ гор. Тифлиса, размѣромъ въ 5 десятинъ, съ оросительной водой, старымъ садомъ и постройками. Участокъ расположенъ на наклонной къ югу плоскости, годенъ для разведенія плодоваго сада, огородныхъ овощей, теплицъ, пчельника, птичьяго двора и пр. Объ условіяхъ узнать по Елизаветинской ул. д. № 94, квартира агронома Тимофеева.

(о. м.) տա. 1307. 3—1

ՀԱՅ ԼՐԱԳԻՐԸ

I

Բազմատեսակ են պահանջները դէպի հայ լրագիրը և չափազանց ընդարձակ։

Եւ հասկանալի է թէ ինչու։

Ինքը հայութիւնը, ինքը ընթերցող հասարակութիւնը չափազանց ցրված է այս ու այն կողմ և նրա պահանջները զանազան բնաւորութիւն են կրում։

Լուսաբանենք օրինակներով։

Թիֆլիսի ընթերցողը շատ կը ցանկանար, որ Թիֆլիսում հրատարակվող հայ լրագիրը լցված լինէր ամեն տեսակ տեղեկութիւններով Թիֆլիսի մասին և պարունակէր մանրամասն նկարագրութիւններ Թիֆլիսի կեանքի, քաղաքային ինքնավարութեան հիմնարկութիւնների, զանազան ներկայացումների, զուարճատեղերի մասին և այլն։

Գաւառացի ընթերցողը դա այնքան կարևոր չէ համարում։ Նա կը ցանկանար, որ լրագիրը պարունակէր տեղեկութիւններ գաւառական ցաւ ու հոգսերի մասին և խորհրդածութիւններ տեղական կարիքների բաւարարութեան մասին։ Նա հետաքրքրվում է և ընդհանուր հայկական, և պետական, և հասարաշխարհային կեանքով։ Եւ որովհետև նա բացի հայերէնից ուրիշ լեզու չը գիտէ կամ չէ կարող երկու լրագիր ստանալ, նա ցանկանում է, որ հայ լրագիրը տայ նրան տեղեկութիւններ և եւրօպական կեանքի, և Պետական Դումայի, և հեռագրական ամեն տեսակ նորութիւնների մասին։

Մեծ քաղաքների՝ Բագուի, Մօսկվայի, Պետերբուրգի, Օդեսայի և ուրիշ քաղաքների հայ ընթերցողը հետաքրքրվում է հայ լրագրի մէջ միայն զուտ հայկական կեանքով։ Նա արդէն առաջուց կարդացել է հեռագիրները, ծանօթ է եւրօպական նորութիւնների հետ, գիտէ Պետական Դումայի և ուրիշ պետական հիմնարկութիւնների գործերը։

Եգիպտոսի, Ամերիկայի ընթերցողները հետաքրքրվում են կովկասեան լրագիրների միայն այն տեղեկութիւններով, որոնք վերաբերում են կամ Թիւրքահայաստանի կեանքին, կամ հանրային հայկական խնդիրներին և կամ իրանց գաղթավայրերի հերթական կարիքներին։

Պարսկաստանի ընթերցողները առանձին ցանկութիւն ունեն, որ կովկասեան հայ թերթերը կարողանան և պարսկահայերի օրգանները ճանաչվել, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ հայ թերթերը մեծ տեղ տան պարսկահայերի կարիքների պարզաբանութեան և նրանց նիւթական խնդիրների մշտական քննութեան։

Մենք կարող էինք աւելի ևս մանրամասնօրէն լուսաբանել պահանջների բազմատեսակութիւնը և ցոյց տալ, որ օրինակ՝ կաթոլիկ-հայերը շատ կը ցանկանային, որ յատուկ տեղ տրված լինէր լրագրի էջերում նրանց հանրային խնդիրների քննութեան, այս ու այն արհեստի պատկանողները կը ցանկանային, որ յատուկ էջեր նուիրված լինէին մշտապէս նրանց շահերի ուսումնասիրութեան։

Միևնոյն ժամանակ չը պէտք է մոռանալ, որ շատերը ցանկանում են, որ լրագիրը տայ նրանց գեղարուեստական, գիտական ընթերցանութեան առատ նիւթ և զեռեղէ վէպեր, նկարագրութիւններ, զեկուցումներ, այնուհետև ծանօթացնէ նոր լոյս տեսնող գրքերի, հրատարակութիւնների հետ և այլն։

Իսկ պակաս չէ և այն պահանջը, որ հայ լրագիրը մատակարարէ առատ նիւթ և մեր դրացի ազգերի՝ վրացիների, թուրքերի, քիւրդերի, պարսիկների, ասորիների, լեռնականների մասին։

Բազմազան են պահանջները։

Բազմազան այնքան, որ նրանց լիակատար բաւարարութիւն տալու համար անզօր կը լինեն նոյնիսկ անդլիական թերթերը իրանց առատ էջերով և հարիւր-հազարաւոր բիւջէներով ու բազմաթիւ բաժանորդներով։

Հայ լրագիրը աշխատում է հնար եղածին չափ բաւարարութիւն տալ այդ զանազանատեսակ պահանջներին և կատարել թէ տեղական, թէ հանրային հայկական, թէ ընդհանուր պարբերական օրգանի դեր, միևնոյն ժամանակ փոխարինել գիրք, ամսագիր և ամեն տեսակ հանդէսներ։

Իսկ ի՞նչ է անում այդ բազմատեսակ և անթիւ ու անհամար պահանջներ անող հասարակութիւնը։

Նա նոր պահանջներ է անում, նա ցանկանում է, որ լրագիրը աւելի ևս էժան լինի, որ բոլոր աշխատաւորները վարձատրվին, որ լրագիրը գառնայ պատկերազարդ, որ նա տայ յատուկ լուսաբանութիւններ։

Եւ վերջապէս մի պահանջ էլ, որ նա ձրի յայտարարութիւններ տալ, տղզասիրաբար հայ ազգի զաւակների համար։

Եւ լրագիրը ձրի ուղարկվի բոլոր հասարակական հիմնարկութիւններին, դրպրոցներին, զինուորներին, ուսանողներին, նաև ամենաւոր անձերին։

Դա մեր իրականութիւնն է։

Ա. Քալանթար

ԿՐԵՏԷԻ ՎԻՃԱԿԸ

Աթէնք, 7 դեկտեմբերի

Վէնիզէլոսի կառավարութիւնը աշխատում է վերջ դնել Կրէտէում ստեղծված սուր դրութեան, վախենալով թէ մի գուցէ Կրետական հարցը լուծվի յօդուտ Թիւրքիայի։ Հովանաւորող-պետութիւնների հիւպատոսներին յանձնված է բողոքի նոտա, որի մէջ հաւատ է յայտնված, որ հովանաւորող-պետութիւնները կրետացիներին թոյլ չեն տայ արիւն թափել իրանց ազգային իրաւունքների պաշտպանութեան համար։ Հերակլիայում և Ֆակիում հանգիստ անցան բողոքի միտինգները։ (Հ. Գ.)

—

Բերլին, 7 դեկտեմբերի

«Ֆոսիշէ-Յայտունգին» հեռագրում են Աթէնքից. «Դրութիւնը Կրետէ կղզու վրա՝ հովանաւորող-պետութիւնների նոտայի շնորհիւ՝ սուր կերպարանք ստացաւ։ Ազգային ժողովի արտակարգ նիստում ընդունվեց բողոքի նոտայի բնագիրը պետութիւնների գործողութիւնների դէմ, որոնք այժմ ճանաչում են Թիւրքիայի գերիշխանութիւնը»։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բէլգրադ, 7 դեկտեմբերի

Կայսրի անուանակոչութեան օրը ռուսական միսսիայի եկեղեցում կատարվեց հանդիսաւոր մաղթանք, որից յետոյ տեղի ունեցաւ ընդունելութիւն և նախաճաշ։ Թագաւորի անունից շնորհաւորեցին Թագաւորի ադիւտանտ Իւրաշիչը և քարտուղար Եանկովիչը։ Ներկայ էին գահաժառանգ Ալէքսանդրը, արքայազներ Դէօրդին և Պաւելը, բոլոր մինիստրները, բարձրաստիճան պաշտօնեաներ, սկուպշտինայի նախագահը, քաղաքագլուխը, Պետերբուրգի բոլոր նախկին սերբիական դեսպանները, ռուս գաղութը։ Դեսպան Հարավինը բաժակ առաջարկեց Կայսրի, Պետրոս Թագաւորի և գահաժառանգի առողջութեան համար։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 7 դեկտեմբերի

Կատարվեց մաղթանք Կայսրի անուանակոչութեան առիթով։ Եկեղեցեան պալատում տեղի ունեցաւ ընդունելութիւն։ Պաշտօնական ճաշին Ֆէրդինանդ Թագաւորը բաժակ առաջարկեց Կայսրի բաղդաւորութեան և Ռուսաստանի երջանկութեան համար, յայտնելով հպատակութեան ու անկեղծ հաւատարմութեան զգացմունքներ Կայսրին, Ազատարար-Ցարի թոռան։ (Հ. Գ.)

—

Հռոմ, 7 դեկտեմբերի

Կայսրի անուանակոչութեան առիթով ռուսաց եկեղեցում կատարվեց մաղթանք։ Դեսպանատանը ճաշին ներկայ էին ռուսաց գաղութի ներկայացուցիչները։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 7 դեկտեմբերի

Քաղաքապետը հրատարակեց պարտադիր որոշում, որով արգելում է գովաբանել յանցաւոր դրդումն և հրատարակել սուտ տեղեկութիւններ, որոնցով թշնամական վերաբերմունք կարելի է զրգռել դէպի կառավարական հաստատութիւնները և պաշտօնական անձինք։ Արգելվում է ամեն տեսակ փողոցային զրգռում ուսանողներին՝ դադարեցնելու, կանգնեցնելու և չը վերսկսելու պարապմունքները կրթական հաստատութիւններում, ինքնակամ միջոցներ ձեռք առնել դադարեցնելու համար պարապմունքները կրթական, առևտրական ու հասարակական հաստատութիւններում սպառնալիքներով, անձի վրա բռնութիւն գործ դնելով, վնասելով շինութիւնները։ Յանցաւորները ենթարկվում են

500 ռուբլի տուգանքի կամ երեք ամսով բանտարկութեան։ (Հ. Գ.)

—

Լոնդոն, 7 դեկտեմբերի

Թագաւորն ընդունեց կոմս Բենկէնդորֆին։ (Հ. Գ.)

—

Պոլտաւա, 7 դեկտեմբերի

Նահանգական զեմստվային ժողովը 100,000 ռուբլի յատկացրեց թոքախտաւոր հիւանդների համար սանատորիա կառուցանելու ի յիշատակ Կայսրի այցելութեան զեմստվային տունը պոլտաւեան հանդէսների ժամանակ։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 7 դեկտեմբերի

Բրիանը Կլոց և Պիւէկ մինիստրների և երկաթուղային չորս մեծ ընկերութիւնների ներկայացուցիչների հետ քննում է երկաթուղային ծառայողներին վերստին ծառայութեան ընդունելու հարցը։

Վէրսալի մօտերը օդագնաց Ֆարմանը աէրոպլանում աշող փորձեր կատարեց անթել հեռագրով՝ խօսելով 10 կիլոմետր տարածութեան վրա։

Արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն կը քննվի ուրբաթ և շաբաթ, որովհետև Պիշոնը ցանկանում է պատրաստ բացատրութիւն տալ արտաքին քաղաքականութեան հարցերի մասին մինչև Մնդեան տոները՝ Ֆրանսիայի միջազգային դրութիւնը մանրամասն լուսաբանելու նպատակով։ (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 7 դեկտեմբերի

Պատգամաւորութիւնները գումարվում են դեկտ. 15-ին համապետական բիւջէի քննութեան համար։ (Հ. Գ.)

—

Նիւ-Եորկ, 7 դեկտեմբերի

Էլեքտրական գլխաւոր կայարանում պայթումից սպանվեցին 14, վիրաւորվեցին 200 մարդ։ Հարևան շինութիւնների մէջ տեղի ունեցան վնասներ։ Զարդվեցին մօտ 5,000 պատուհանի ապակիներ։ Պայթումից կաւքերը շրջվեցին, անցորդները ցնցվեցին։ (Հ. Գ.)

—

Զագրէբ, 7 դեկտեմբերի

Խորվատական սէյմի բացման ժամանակ տեղի ունեցան տաք ընդդիմախօսութիւններ կօալիցիայի և գիւղացիական կուսակցութեան միջև։ (Հ. Գ.)

—

Իսկոհամա, 7 դեկտեմբերի

Պարլամենտի յատուկ ժամանակագրողների նիստերը այսուհետև անմատչելի են լինելու մամուլի ներկայացուցիչների համար։ Հաշիւները կը հրատարակվեն միայն կառավարական օրգանում։ (Հ. Գ.)

—

Նիւ-Եորկ, 7 դեկտեմբերի

Չիկագուայից հաղորդում են, որ Նալպազոի մօտերը երկու օր կրիւ է տեղի ունեցել կառավարական զօրքերի և ապստամբների միջև. վերջինները ունեցել են խոշոր կորուստներ։ (Հ. Գ.)

—

Մուկդէն, 7 դեկտեմբերի

Գէն.-նահանգապետ Սիլիանը ստացաւ կառավարութեան պատասխանը պարլամենտի շտապիչ բացման առիթով։ Սիլիանի հրաժարականի խնդրագիրը չընդունվեց։ (Հ. Գ.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՕԼՈՍ ԿԵԱՆՔԷՆ

—

Կ. Պոլիս, 20 նոյեմբեր

Օդը շատ տխուր է. սուլթաններու սէրայէն դուրս ելած, կուզեմ միտքս ազատել այն տպաւորութիւններէն, որոնք արիւնոտ աւերակ մը թողած են պատմութեան մէջ։ Երկու քայլ կառնեմ, Բաբ-ի-Հումայուն դռնէն հեռանալով, ձախակողմս զիս կը հրապուրէ Ահմէդ Գ.-ի հիասքանչ մարմարակերտ աղբիւրը։ Անցեալն իր արուեստով՝ դարձեալ կը հպարտանար հոն, Պարսկական էն գեղեցիկ զորգերը՝ կարծես քարացած արդուզարդեր են անոր հնայրտ կողերը։

Փայտայեցի անոր պատուհաններուն մարմարիոն ոսկեզօծ ժանեակները. աղաւնիներէն աւելի քնքուշ էին անոնք. ու կը մտածես, որ այս աղբիւրը կարծես սուլթաններու աչքէն ինկած սուլթանուհիի մը պէս նեռուած է սէրայէն դուրս։ Նկարէն մարմարներով երիվներ՝ նախշունակ են անոր չորս կողմի երեսները։ Վրայի ծածկը բուրատաններու մէջ եղած շինական պէլվէտերներու գաղափարը կուտայ։ Չորս անկիւնը և կեդրոնը մէկ մէկ գմբեթներ։

Այ կողմս վեհափառ անշքութեան մէջ՝ չորս մինարէներու շուքին տակ դարերու շրջանները կը համբէ ս. Սոֆիայի մզկիթը։ Անոր բովանի դռնէն՝ կը փորձենք ներս մտնել։ Ըսին մեզի՝ թէ նէմազի ատեն է, այցելել կարելի չէ։ Հնարքով մը թոյլ տուին, ու մենք կրցանք պահ մը սպասել։ Ամբոխ մը կար։ Ամբոխ մը՝ որ ամենայն հանդարտութեամբ կը սպասէր

ների ճիշդ և մանրամասն ցուցմամբ ևս՝ որչափ հնար է, համեմատութեամբ՝ ուր հարկ լինի, յոյն և ասորի բնագիրների հետ։

Աշխատութիւնները կարող են ներկայացվել՝ հայերէն կամ ռուսերէն, ֆրանսերէն կամ գերմաներէն։

Լաւագոյն աշխատութիւնը յիշած ամեն մի նիւթի մասին կը պարգևատրվի Խորհրդի կողմից—առաջնի համար՝ 1000 ռուբլի (աւելի քան 2500 ֆրանկ) և երկրորդի համար՝ 700 ռուբլի (մօտ 1800 ֆրանկ) մրցանակով։

Եթէ այս նիւթերից որևէ մէկի մասին ներկայացրած աշխատութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ։

Աշխատութիւնները պէտք է ներկայացվեն Լազարեան ճեմարան 1913 թ. օգոստոսի 1-ից ոչ ուշ։

Վերատեսուչ ճեմարանի՝ Վս. Միլլեր
Քարտուղար Խորհրդի՝ Ա. Խախանով
13 նոյեմբերի 1910 թ.
Մոսկվա

ԾՐԱԳԻՐ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐ

—

Դեռ անցեալ տարվանից հրատարակվեց տարբական դպրոցների համար ծրագիր, որը այս տարի շատ չնչին փոփոխութիւններով պարտադիր դարձաւ բոլոր դպրոցների համար և հոգաբարձուները գրութիւններ ստացան պատուիրելու ուսուցիչներին, պարապելու ըստ ծրագրի։ Մեր նպատակը չէ տալու ծրագրի լաւ ու վատ կողմերը լինելը, միայն երբ թերթելու լինենք ծրագիրը և աչքի առաջ ունենանք գոյութիւն ունեցող դասագրքերը, բոլորս էլ կը տեսնենք, որ ծրագիրը և դասագրքերը միմեանց չեն համապատասխանում, որը մեծ դժուարութիւններ է առաջ բերում դպրոցներում։

Մեզնում մեծ քանակութեամբ դասագրքերը գոյութիւն ունեն, ինչպէս ասում են, իւրաքանչիւր տեղից վեր կեցող դասագիրք գրող է դարձել, բայց ըստ ծրագրի, որևէ օրինաւոր, լուրջ դասագիրք, որը կարելի լինի վստահօրէն յանձնել աշակերտի ձեռքը, համարեայ գոյութիւն չունի։

Եւ ասեն կողմից ստիպում են ուսուցչին, անցնել ծրագրում նշանակվածի համեմատ։ Ի հարկէ շատ լաւ է այդ ամենը, բայց ինչ անէ խեղճ ու կրակ ուսուցիչը։ և եթէ նոյնիսկ ի նկատի չառնենք ուսուցչի տանջանք-տառապանքները ու ստիպենք նրան, աչքերից կորի նոյնիսկ քունը և այս ու այն աղբիւրից քաղուածքներ անելով ծրագրի համապատասխան դաս պատրաստէ և հետևեալ օրը աւանդէ դասարանում, ինչ անեն փոքրիկ աշակերտները, մի՞թէ նրանք առանց դասագրքի կարող կը լինեն դաս պատրաստել ու կամ գուցէ նրանց ձեռքը պէտք է տալ մի որևէ առարկայի համար 2—3 դասագիրք։ Մենք բոլորս էլ գիտենք, որ այդ բանը անկարելի է, աշակերտների չքաւորութեան պատճառով։

Ո՞ւրեմն ինչ անել։

Դէ՛ն գցել ծրագիրը, թէ դասագրքերը։

Ոչ այս, ոչ այն, որովհետև առանց առաջնի մեր դպրոցներում նորից կը թագաւորի բարեկոնեան խառնակչութիւնը, իսկ առանց երկրորդի աշակերտին անհնարին կը դառնայ դաս պատրաստելը։

Եւ որպէսզի գոնէ ապագայում խոչնդոտները վերացած լինեն, լաւ կը լինէր, որ Վեհ. Կաթողիկոսի անմիջական իշխանութեան հսկողութեան ներքոյ կազմվի մի կոմիսիա, հմուտ, փորձած մանկավարժներից, որպէսզի կազմեն դասագրքեր, կամ հրատարակվելիք դասագրքերը քննեն, փոփոխեն, յարմարեցնեն ծրագրին ապա հրատարակելու տան յանձնարարելով դպրոցներին։

Եւ այդ որքան շուտ այնքան լաւ, որովհետև մօտենում է նաև 1911—12 թիւը, իսկ այդ թիւն դպրոցական գործին նախանձախնդիր բոլոր մարդիկս կը ցանկանայինք, որ բոլոր դպրոցներում էլ միևնոյն ծրագիրը թագաւորէր։

Արշալոյս Տէր-Յովհաննէսեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

Պետերբուրգ, 7 դեկտեմբերի

Նախագահում է Կապուստինը, որ յայտնում է թէ Թագաւոր Կայսրը բարեհաճել է ուղարկել հետևեալ հեռագիրը, ի պատասխան Դումայի ուղարկած հեռագրի Նորին Մեծութեան անուանակոչութեան առիթով.

«Շնորհակալ եմ Պետական Դումայից, Ինձ շնորհաւորելու համար. ՆԻԿՈԼԱՅ»։

Հեռագրի ընթերցումը լսվում է բոլորի կողմից ոտքի կանգնած և կրկնակի «ուռռաներով»։

Հերթին ծառայողների նօրմալ հանգստի նախագծի չորրորդ յօդուածի վիճաբանութիւններն են։ Յօդուածը թոյլ է տալիս առևտրի մի քանի ճիւղերի համար աւելացնել բանւորական ժաները մինչև 15 ի, բայց միայն բանւորներին փոխելով կամ առանձին վճարով։

Կոմս Բօբրինսկի 1-ինը ընդգծելով, որ օրէնքը չը պէտք է ճնշէ առևտրի ազատութիւնը, խօսում է յօդուտ ծառայողների փոփոխութեան սկզբունքի անպայման հաստատութեան։

Զելիոխվը պնդում է, որպէսզի ոգելից խմիչքներ վաճառող հաստատութիւններում առևտուրը պոյլ տրվի միայն 12 ժամ։

Ապա խօսում են Կովալէնկո 1, բարոն Տիզենհաուզէն, Սուշկով, Մարկով, Շչէպկին, բարոն Ստրուվէ և Պրեդկալնը։ Վերջինը յայտնում է, որ սօց.-դեմոկրատները հաշի առնելով կեանքի պահանջները իբրև կոմպրոմիս կողմնակից են 16-ժամեայ աշխատանքին, նոյնիսկ 24 ժամին, այն պայմանով, որ իւրաքանչիւր 8 ժամից յետոյ բանւորները փոփոխվեն։

Քուէարկութեամբ յօդուածն ընդունվում է երկրորդ ընթերցման ժամանակ Դումայի սահմանած խմբագրութեամբ, նաև այն լրացուցով, որ ոգելից խմիչքներ վաճառող հաստատութիւնների մէջ առևտուրը կատարվելու է 12 ժամից ոչ աւել։

5—8 յօդուածները առաջ են բերում բաւական երկար վիճաբանութիւններ, որոնց ժամանակցում են՝ Նիկոլսկին, Ստեպանովը, Գուլկինը, Պետրով 3, Կուզնէցովը, Մարկովը, հայր Մուշկէվիչը, Պրեդկալնը, Շչէպկինը, Էլդեկովը, բարոն Տիզենհաուզէնը, Տիմոշկինը։ Այս յօդուածները, որոնցով որոշվում են առևտրական ծառայողների պարապմունքները սահմանված նօրմայից դուրս, ընդունվում են երկրորդ ընթերցման ժամանակ Դումայի խմբագրութեամբ։ Լրացուցիչ ուղղում ընդունվում է այն իմաստով, թէ առևտրական ծառայողները իրաւունք են ձեռք բերում պարապմունքներից ազատ ժամանակը նստել ու կարդալ, որի համար խանութներում պէտք է լինեն հարկաւոր քանակութեան նստարաններ։

Ապա երկար և կրակոտ վիճաբանութիւններից յետոյ 132 ձայնով ընդդէմ օպոզիցիայի 71 ձայնի ընդունվում է այն օրինագիծը, որով թիւրքեստանի քոչէրի ցեղերի համար աւելորդ հողերը ընկնում են հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան իշխանութեան տակ։ (Հ. Գ.)

մարի վրա էլ աւելի ատղեր են երևում ու լուսինը նման է այժմ արծաթեայ մի ատուերի՝ ոսկու մէջ թաթախած։

Ցուրտ չէ, ամենևին ցուրտ, միայն անտառում զով լռութիւն է տիրում ու կեանքը եռում։ Ծառերը կանգնած՝ մտածում են։ Պտուղները հասել են։

Այսպէս ժամեցաւ օգոստոսի 22-ը ու նրա հետ միասին երեք երկաթէ*) գիշերները։

Առաջին երկաթէ գիշեր։

Ժամը 10-ին մայր է մտնում արևը։ Մութը կիսաթափանց քողով երկիրս է պատում, երկնակամարի վրա երկու-երեք ատղ է երևում, քիչ յետոյ լուսնի մանգաղը։ Հրացանը ուսիս՝ շանս հետ միասին թափառում եմ անտառում, նստում կրակ անում. կրակիս լոյսը անտառն է լուսաւորում։ Շատ ցուրտ չէ։

Առաջին երկաթէ գիշեր, ասում եմ ինքս ինձ։ Ու անմիտ, այրող մի հրճուանք տիրում է ինձ ամբողջովին՝ ժամանակի ու տեղի մասին մտաբերելով...

Է՜յ, մարդիկ, հաւքեր ու գազաններ, ձեզ հետ միասին այս լուռ գիշերվայ կենացն եմ ես խմում։ Խմում եմ մթութեան ու ծառերի մէջ լսվող Աստուծոյ շշնջիւնի կենացը, պտղի ու բարեհնչիւն լռութեան կենացը։ կանաչ ու դեղին տերևների կենացը... Կեանքի շշուկի կենացն եմ ես խմում՝ շուրջս սփռված, շանս կենացը, որը փռնչալով՝ խոտերի մէջ գետինն է հոտոտում։

Անդուսպ հրճուանքով խմում եմ վայրի կատուի կենացը, որը մէջքը ցցած, իր սրան է դիտում ու պատրաստվում յարձակվելու ճնճղուկի վրա՝ մթութեան մէջ, մթութեան մէջ։ Երկրի հեզ լռութեան կենացն եմ խմում, ատղերի կենացը, կիսալուսնի կենացը, այո՛, թէ մէկի և թէ միասներիս...

Վեր եմ կենում ու ականջ դնում։ Ոչ ոք չէ լսում ինձ։

Նորից նստում եմ։

Շնորհակալութիւն քեզ, օ, լռու գիշեր, ձեզ ևս շնորհակալութիւն՝ լեռներ, մթութիւն ու ծովի աղմուկ՝ սրտիս մէջ լսվող։ Շնորհակալութիւն՝ կեանքիս, շնչելուս, գիշերով ապրելու երջանկութեանս համար,—այդ բոլորի համար ի սրտէ շնորհակալ եմ ես։ Լսիր դէպի արևելք, լսիր դէպի արևմուտք, այո, լսիր ու լսիր։ Յաւիտենական Աստուծոյ ձայնն է այդ։ Ականջիս տակ քշփշող այս լռութիւնը՝ մեծ տիեզերքի եռուն արիւնն է, Աստուածն ինքը, տիեզերքն ու ինձ թափանցող։

Կրակիս լոյսով տեսնում եմ սարդի փայլուն ոստայնը, լսում ծովում սահող մակոյկի շշնջիւնը, հիւսիսափայլը երկնքում դէպի վեր է սողում։ Երդվում եմ անմահ հոգուս՝ օ, անչափ շնորհակալ եմ և այստեղ նստելուս համար...

Խորին լռութիւն։ Օսուց՝ կոնը պոկվում, խուլ կերպով գետին է ընկնում։ Այդ ընկաւ կոնը, մտածում եմ ես։ Էկա գիշեր է։ Կրակիս լոյսը առկայծում է, շուռտով կը մարի... Լուսինը վերևումն է արդէն։ Վեր եմ կենում, քայլերս ուղղում դէպի տուն։

Վիկտոր Մանուէլեան

*) Երկաթէ գիշերներին, օգոստոսի 22-ից մինչև 25-ը, այս լայնութեան մէջ սկսվում են ցրտերը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Այսօրվայ տօնի պատճառով «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնէ շաբաթ օրը, դեկտեմբերի 11-ին։

◆ Էջմիածնի «Արարատ» ամսագրի նոյեմբերի համարում տպված են հետևեալները։—Պետերբուրգի Կայսերական Հնագիտական խորհրդին յանձնված է՝ թէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ընդունում է Անիում հիմնվելի հնագիտական ինստիտուտի պատուաւոր հոգաբարձուի կոչումը։—Տիգրանակերտի հայոց առաջնորդին կօնդակով պատուիրված է ժողովել իր թեմում եղած բոլոր ձեռագրերը և ուղարկել Էջմիածին՝ Մայր Աթոռի մատենադարանում պահելու համար։—Կաթողիկոսի և սինօդի կարգադրութիւններով Տաճատ վարդապետը (նախկին դիւանապետ Երիմեան կաթողիկոսի) կարգալոյծ է եղել։—Ճեմարանի վարչութեան թոյլատրվել է բանալ ճեմարանին կից վարժոց։—Շրջաբերական կօնդակներ Ռուսաստանի թեմական առաջնորդների անունով, որոնցով պատուիրվից կարգադրել թեմերի բոլոր հայոց եկեղեցիներում զանձանակ շրջեցնել, պատերազմում ընկած զինուորների և նրանց ընտանիքի օգտին։

◆ Թուչնապահութեամբ հետաքրքրվողների թիւը շատանում է մեզանում։ Վերջին երկու տարվայ ընթացքում շատ գիւղերում փորձեցին ձեռք բերել ձուաբեր տեսակի հաւեր։ Եւ որովհետև գիւղացիների համար թանգութեան շնորհիւ դժուար էր հաւեր և աքաղաղներ գնելը, ուստի նրանք ձեռք էին բերում հաւկիթներ և թուխս դնում իրանց տեղական հաւերի տակ։ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական Ընկերութիւնը անցեալ տարի կազմակերպել էր դասախօսութիւններ թռչնապահութիւնից, իսկ այս տարվայ գարնանից բաժանել է ձեռնտու գներով ձուաբեր գիւղացիներին։ Ընկերութիւնը այսօրվայ ընդհանուր ժողովում, որ տեղի պէտք է ունենայ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում, կը հաղորդէ տեղեկութիւններ իր արած փորձերի և ստացած հետևանքների մասին։

◆ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան այսօրվայ նիստում տեղեկութիւններ կը հաղորդվեն Ցխինվալի ճիւղի գործունէութեան մասին, որ սկսվել է անցեալ տարվայ յունիսից և շարունակվել մինչև ներկայ դեկտեմբերի 1-ը։ Նիստում կը զեկուցվի նաև Գանձակի ճիւղի գործունէութեան համառօտ հաշիւը։ Նիստին կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձեր։ Սկիզբն է 7 ժամին երեկոյեան։

◆ Հալաթարի Էջմիածնեցոց եկեղեցու ծխ. դպրոցի շինութեան մէջ, դեկտեմբերի 5-ից, Ժողովրդական Համալսարանը բացել է կիրակնօրեայ գրագիտական դպրոց հայ անգրագէտ հասակաւորներին հայոց լեզու ուսուցանելու համար։

◆ 1911 թ. յունվարի 2-ին հասարակական ժողովարանում կայանալու է մի ճոխ երեկոյթ, յօգուտ Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. Խորհուրդը խնդրում է մեզ տպել. «Խորհուրդը ստացել է յօգուտ Ընկերութեան գրադարանի հանդուցեալ բժիշկ Բաբեանի կնոջից «Տնային բժշկարան» գրքի I և II հատորներից 15-ական օրինակ ի յիշատակ իր հանդուցեալ ամուսնու»։

◆ Սկսված են Թիֆլիսի և Բաքուի միջև հեռախօս հիմնելու աշխատանքները, որոնք աւարտվելու են մինչև 1911 թ. մարտ ամիսը։

◆ Զուբալովեան Ժողովրդական Տան ռուսաց դրամատիկական խմբակը որոշել է ժամանակել Մեսխիի յօբելեանին։

◆ Կովկասեան Ֆիլօկսերային կոմիտէը դիմեց երկրագործութեան դեպարտամենտին, միջնորդելով միջոցներ յատկացնել ռուսերէն և վրացերէն բրօշիւրներ հրատարակելու Ֆիլօկսերայի մասին խաղողի այգիները այդ հիւանդութիւնից ազատ պահելու։

◆ Մինիստրների խորհուրդը քննեց ու Բարձրագոյն բարեհայեցողութեանը ներկայացնելու արժանի համարեց առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութեան առաջադրութիւնը՝ թոյլ տալու գործողութիւններ սկսել Ռուսաստանում ֆրանսիական ակցիօներական ընկերութեան, որը կրում է «Կովկասում աւտոմօբիլների հաղորդակցութեան ֆրանսիական անօնիմ ընկերութիւն» անունը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը երեք նախագծեր է ստացել՝ Թիֆլիսում Զէրբէդօվի համար արձան կանգնեցնելու առիթով։

◆ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը ներկայումս հարց է բարձրացրել դաշտամկների դէմ սիստեմատիկ կռիվ մղելու մասին։ Պէտք է ի նկատի ունենալ, որ այդ վնասակար կենդանիները բուն են դրել հաւաբեա ամբողջ Անդրկովկասում։ Առանձնապէս նրանք մեծ վնասներ են պատճառում Անդրկովկասի արևելեան մասում։

◆ Կովկասի քաղաքացիական վարչութեան բժշկական մասի կառավարիչ Ֆիխները մեկնեց Բաթում՝ ծանօթանալու համար այնտեղ ժանտախտի դէմ ձեռք առած միջոցների հետ։

◆ Կովկասեան հանքային ջրերում լոյս տեսնող «Голосъ Курортовъ» լրագիրը վերակոչվում է «Кавказскій Край»։

◆ Կիէվի համալսարանից ուսման վճարը չը տալու համար արձակվել են 700 ուսանողներ։

◆ Որոնվում է անյայտացած 10 տարեկան Յարութիւն Տէր-Յարութիւնեանը։

◆ Ինչպէս յայտնի է, Բաքուի քաղաքային ինքնավարութիւնը կովկասեան ապագայ բարձր կրթական հաստատութեան համար որոշեց յատկացնել կէս միլիոն ռուբլի։ Սակայն այդ որոշումը բեկվեց քաղաքապետի կողմից։ Այժմ վերջնական հաստատութեան համար քաղաքապետը Բաքուի դումայի յիշեալ որոշումն ուղարկել է Կովկասի Փոխարքային։

◆ Բալախանում ձեռնարկվել է հայ եկեղեցու կառուցման աշխատանքներին։

◆ «Աշարատ» ամսագրի նոյեմբերի համարում տպված է կենսագրական՝ հոկտեմբերի 31-ին վախճանված Գրիգոր արքեպիսկոպոս Գառնակերեանի և նոյեմբերի 3-ին վախճանված Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանի մասին, բայց որևէ տեղեկութիւն թողած դրամների մասին չը կայ։ Եւ սակայն հասարակութեան մէջ լուր է պտտում, որ Գառնակերեանը թողել է մօտ 70,000 ռուբ.ի։ Սինօդը պարտաւոր էր բացատրութիւն տալ այդ մասին, զանազան տարաձայնութիւնների առաջն առնելու համար։

ԹԻՏՈՒԹ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐ.

ԿԱՏՈՒՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Երեքշաբթի, դեկտ. 7-ին, Հայոց Դրամատիկական խմբի տուած ներկայացումը՝ «Ցո՛ երթաս», քիչ հասարակութիւն էր գրաւել թատրոնս։ Եւ պէտք է ասել, որ ներկայացումն էր անցաւ բաւական թոյլ։ Այնպիսի պիէսներ, ինչպէս Սենկեվիչի «Ցո՛ երթաս» դրաման է, պէտք է խաղացվեն այնպիսի խմբի ձեռքով, որ բաղկացած լինի բոլորը առաջնակարգ ոյժերից, որովհետև թէ Ներոնի, թէ Պետրոնիուսի և թէ Մարկի, Քիլոնի, Լիգիայի, Ուրսուսի տիպերը կենտրոնական տիպեր են։ Ի հարկէ Աբելեան (Պետրոնիուս), Զառիֆեան (Մարկուս), օրիորդ Ադամեան (Լիգիա), Աւետեան (Քիլոն), տիկին Մայսուրեան (Էնիկէ) ամեն ջանք գործ էին դրել և բաւական աջողութեամբ տարան իրանց դերերը, բայց անսամբլի թոյլ լինելու պատճառով, ներկայացումն ևս ընդհանրապէս անցաւ թոյլ։ Մեր պարոն դերասանները այդպիսի պատմական նշանաւոր պիէսներ խաղալուց առաջ պէտք է նեղութիւն կրեն լաւ ուսումնասիրելու պատմական համապատասխան շրջանի պատմութիւնը։ Հ. Ա.

—

Դեկտ. 7-ին, Արքունական Թատրոնում Վ. Լիպէցկիի բենեֆիսին դրվեց Վերդիի «Տրուբադուր» օպերան։

Մանրիկօի դերը բենեֆիցիանտը տարաաջող, թողնելով իր երգի ու խաղի համաչափութեամբ հաճելի տպաւորութիւն լսողների վրա։ Նա ստացաւ մի քանի ծաղկեփունջ և արծաթեայ ընծայ։

Տօմսկին իր անսպառ ձայնից այդ օրը մի մասը նուիրեց կոմս դի-Լունի դերում, որ խաղաց շնորհալի կերպով։

Տիկ. Կովալչին շարունակում է առաջադիմել։ Նա գեղեցիկ Լէօնորա էր և տպաւորիչ վերջին գործողութիւններում։

Ներկայացման աջողութեան խոշոր մասն ընկաւ տ. Կալինինային, որ գնչուհու դերը ամբողջացրեց և արժանացաւ անվերջ ծափահարութիւնների։

Դեմեանենկո, Պեվցով և Պլատով նպաստում էին անաբելին, որ պէտք է ասել աջողված էր միանգամայն։

Դիրիժօր Ասլանովը հմուտ է իր արուեստի մէջ։ Դեռ երիտասարդ՝ նա կանգնած է փայլուն ապագայի առաջ։

Շաբաթ, առաջին անգամ Թիֆլիսում, օպերային խումբը կը խաղայ Իպպոլիտով-Իվանովի «Դաւաճանութիւն» նոր օպերան։

Առհասարակ շնորհակալ պէտք է լինել Անտոն Էյիեենվալդից, որ չէ խնայում և ոչ. մի ջանք Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեան համար բեմ հանելու նորանոր երաժշտական արտադրութիւններ։ Այդ տեսակէտից թէ խմբի և թէ օրկէստրի եռանդը գովասանքի է արժանի։ Ե.

ՎԱՂՎԱՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

—

Վաղը, Արքունական Թատրոնում, դերասանուհի օր։ Ադամեան իր բեմական տասնին բենեֆիսին դնում է Շէքսպիրի «Ռոմէօ և Ջիւլիէտա»։

«Ռոմէօ և Ջիւլիէտա»... Այս դրաման պատկանում է Շէքսպիրի ամենալաւ գրուածքների թւին, իսկ ըստ մի շարք քննադատների՝ «սա ամենից պլաստիկական, ամենից քնքոյշ, ամենից ամբողջացածն է այն բոլորից, ինչ որ գրել է դրամաների արքան՝ Շէքսպիրը իր կեանքում»։

Դեռ ոչ ոք, մինչև Շէքսպիրը և նրանից յետոյ, մինչև օրս սիրոյ դրաման չէ պատկերացրել այնպիսի խորը թափով, հարազատութեամբ և ամբողջացած, որքան այդ տեսնում ենք մենք «Ռոմէօ և Ջիւլիէտի» մէջ։ Հոգեբանական մօտէնտները, սիրոյ պայքարն ու բեմականութեան էֆֆէկտները երբէք աւելի մեծ ներդաշնակութեամբ չեն եղել զուգորդված, քան այս դրամայում։ «Դա,—գրում է Հէրվինիուսը,—գործված է այնպիսի քնքոյշ թելերից, որպիսին կարող էր տալ միմիայն Շէքսպիրը»։

Գալով վաղվայ ներկայացմանը, պէտք է ասենք, որ «Ռոմէօ և Ջիւլիէտը» հայերէն լեզուով դրվում է առաջին անգամ հայ բեմի վրա, գոնէ Ռուսաստանում, հայերիս մէջ, և մի շարք ժամանակակից պիէսների ներկայացումից յետոյ կլասիկականին և այն էլ Շէքսպիրին անցնելը պէտք է ողջունել բոլոր սրտից։ Թէ օր. Ադամեան և թէ Ա. Շահխաթունի Հայ Դերասանական խմբի այն անդամներից են, որոնք՝ աւելի քան ուրիշները այդ խմբից՝ կարող են պատուով դուրս գալ այն ծանր պատասխանատուութիւնից, որ վերցրել են իրանց վրա, խաղալով մէկը՝ Ջիւլիէտի, միւսը՝ Ռոմէօյի դերերը։ Ջայնը, որը խաղի հոգին է բեմի վրա, անկեղծ թրթռումների հետ, անշուշտ, այս անգամ էլ կը գայ դաշնակցելու մեր երկու շնորհալի դերասաններին։

Զենք կասկածում, սակայն, որ հայ հասարակութիւնն իր այցելութեամբ ոչ միայն պատուած ու խրախուսած կը լինի շնորհալի դերասանուհուն, այլ պատուած կը լինի իրան, ապացուցելով, որ ինքն ունի ճաշակ և գեղարուեստական բարձր ու վսեմ բաւականութիւնների պահանջ և ըմբռնում։ Ա. Ա.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

„Арменія“, Путевыя Очерки и Этюды, Х. Ф. Б. Линча, переводъ съ англійскаго Елизаветы Джунковской. Въ двухъ томахъ. Томъ I—Русскія провинціи. Томъ II—Турецкія провинціи. Изданіе Торг. Дома „И Е. Питоева и К-о“, Тифлисъ, 1910 г. («Հայաստան», Ուղեորական Ակնարկներ և Ուսումնասիրութիւններ, Ռ. Ֆ. Բ. Լինչի, թարգմանութիւն անգլիերէնից Եղիսաբէթ Զունկովսկայայի։ Երկու հատոր։ Հատոր Ա.—Ռուսական նահանգներ։ Հատոր Բ.—Թիւրքական նահանգներ։ Հրատարակութիւն «Ե. Ե. Փիթոյէվ և Ընկ.» Առևտրական Տան» Թիֆլիս, 1910 թ.*).

III

Առաջին հատորը, որ պարունակում է իր մէջ Հայաստանի ռուսական նահանգների նկարագրութիւնը, բաղկացած է 22 գլուխներից, որոնց մէջ նկարագրված են Սև-ծովեան ափերը և նրա նաւահանգիստները, վերելքը դէպի Հայաստան, Ախալցխան, Ախալքալաքը, Ալէքսանդրոպոլը, Երևանը, Արարատ սարը և նրա գագաթ բարձրանալը, Արարատի ծոցերը, Էջմիածինը իր շրջականերով, Անին և Կարսը, Բագրատունեաց թագաւորութիւնը, Հայաստանի կենտրոնական լեռնաշղթան, Հայաստանի աշխարհագրական տեսութիւնը, վիճակագրական և քաղաքական տեսութիւնը։ Եւ այս բոլոր նկարագրութիւնը լուսաբանված է գեղեցիկ և բազմաբանդ նկարներով ու պատկերով և քարտէզներով։

Մեծ հաճոյքով մարդ կարդում է այն էջերը, որոնք նկարագրում են Լինչի և ընկերների բարձրանալը Արարատի գագաթը։

Էջմիածին Լինչը մտնում է այն օրերը, երբ պէտք է կատարվէր Երիմեանի կաթողիկոսական օծումը և երբ վանքը լցված էր ուխտաւորներով և պատգամաւորներով։ Նկարագրելով Երիմեանին, նա ասում է. «Երիմեանը—քահանայապետի իդէալ է։ Դա մի մարդ է, որ կարծես փոխադրվել է մեր դարը ուղղակի հին Ուխտի ժամանակից իր ամբողջ կրակով և իր ամբողջ բանաստեղծութեամբ։ Նրա օծման ժամանակ մեզ թւում էր, թէ Արարատի ստորոտում գեռ կենդանի կանգնած է հին բիբլիական տաճարը և ս. Միւռոնը, որ թափվում էր այդ պատկառելի գլխի վրա ոսկէ աղաւնու կտուցից, սրբագործում էր ժողովրդի համար մի նոր օրէնդիր, որ պէտք է աւետէր նրանց աստուածային խօսքը։ Այդ տպաւորութեան մասամբ նպաստում էր նրա դէմքի սեմիտական տիպը»։

Էջմիածինը իր թանգարանով, մատենադարանով, եկեղեցիներով, դամբարանների, ճեմարանով, ինչպէս և հայոց եկեղեցու պատմութիւնը մանրամասնօրէն նկարագրված է բազմաթիւ ծանօթութիւններով և մեկնաբանութիւններով։ Մանրամասնօրէն նկարագրված են և Անին իր աւերակներով հայկական միջնադարեան, այն է Բագրատունեաց թագաւորութիւնը։

Չէ կարելի ասել, որ թէ պատմական և թէ վիճակագրական տեղեկութիւնները առաջ են բերված Լինչի գլխում բոլորովին ճշդութեամբ, ոչ, սխալներ և անճշդութիւններ կան։ Հայերի թիւը Անդրկովկասում նա ընդունում է ըստ 1886 թ. վիճակագրութեան միայն 962,426։ Սակայն զարմանալ պէտք է, որ Լինչը անծանօթ լինելով հայերէնին, կարողացել է այնուամենայնիւ հաւաքել այնքան առատ և ճոխ տեղեկութիւններ, որոնցով լի է նրա աշխատութիւնը։

Մեզ ռուսահայերիս համար ամենից շահեկանը և հետաքրքրականը II հատորն է, որ պարունակում է Օսմանեան Հայաստանի մանրամասն նկարագրութիւնը, վանքերի և հին պատմական կոթողների նկարները։ Ցաւում եմ, երբ Սահակ քահանայ Սահակեանը իր դասագրքերի համար որոնում էր Մուշի ս. Կարապետի վանքի պատկերը

*) Տես «Մշակ» № № 242 և 258.

և ոչ մի տեղ չէր կարողանում գտնել և նա գտաւ Լինչի II հատորի մէջ այդ վանքի հիանալի նկարը։ Եւ արդարև Լինչը առնուշադիր չէ թողել Հայաստանի ոչ մի փոքր ի շատէ նշանաւոր վայրը, որ չը լուսանկարէր նրան և չը նկարագրէր։

Ռուսական Հայաստանից, Ալաշկերտի վրայով նա մտնում է օսմանեան Հայաստանը, որի նկարագրութիւնը տալիս է XX գլուխների մէջ։ Եւ ահա մենք կարդում ենք հետաքրքիր նկարագրութիւնները Վանի Ծովակի, Վանի, Բիթլիսի, Մուշի, Էրզրումի վիլայէթների և նահանգների և հայկական լեռնաշղթաների։ Վերջացնելով իր առաջին ճանապարհորդութիւնը, նա ձեռնարկում է երկրորդ ուղևորութիւն, 4 տարուց յետոյ, այն է 1898 թ., այն ժամանակ, երբ տեղի էին ունենում Հայաստանի աղետալի դէպքերը։ Կենտրոնական սարահարթի վրայով նա մտնում է Խնուս, այնտեղից Տուսպի և Մուրադ գետի վրայով՝ մինչև Մանազկերտ, ապա Ախլաթ, այցելում է Ներբովթ սարի հրաբուխը, Նապիկ լճի շրջակայքը, բարձրանում է Սիփան սարի գագաթը, վերադառնում է դէպի կենտրոնական սարահարթը, այցելում Բին-գէոլը և ծայրային լեռնաշղթայով վերադառնում Էրզրում և այդտեղից Տրապիզոնի վրայով՝ Եւրոպա։

Հայ ժողովրդի թիւը Լինչը հաշիւ 3 միլիոն է հաշուում, տալով այսպիսի ցուցակ.

1) Հայկական սարահարթում (ռուսական և թիւրքական նահանգներում) 906,984, 2) Կովկասում և ռուսական Անդրկովկասի մացեալ մասում 450,000, 3) Ատրպատականում և Բեսսարաբիայում 75,600, 4) Ասիական Թիւրքիայի մացեալ մասերում 754,500, 5) Եւրոպական Թիւրքիայում 186,000, 6) Ատրպատական պարսկ. նահ. 28,890, 7) Նոր-Զուղայի և մացեալ Պարսկաստանի մէջ 14,110, 8) Բոլգարիայում և Ռումելիայում 5,010, 9) Ռումինիայում 8,070, 10) Աւստրիայում 1,230։ Ընդամենը 2.427,394։

Մեր մատենագրութեան սկզբում մենք յայտնեցինք, որ Լինչի աշխատութիւնը զուտ գիտական գործ չէ, բայց այնու ամենայնիւ նա մի կապիտալ և հսկայական աշխատութիւն է Հայաստանի մասին և ոչ միայն այդ երկրին բոլորովին անծանօթ եւրոպացին, ամերիկացին կարդալով այդ աշխատութիւնը, կարող է լի ու լի գաղափար ստանալ մեր հայրենիքի մասին, այլ և մենք հայերս շատ և շատ բան կարող ենք սովորել նրանից։

Հետևաբար մենք ջերմօրէն յանձնարարում ենք մեր ունևոր հայերին ձեռք բերել այդ գիրքը և մաղթում ենք, որ նրա հայերէն թարգմանութիւնն ևս շուտով լոյս ընծայվի։

Փիթոյեան առևտրական տունը իր ներկայ հրատարակութեամբ մի նշանաւոր գանձ մտցրեց Հայաստանին վերաբերեալ գրականութեան մէջ։ Հ. Առաքելեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
7 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խալերայով հիւանդ մնում են 6 հոգի։

Հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը առաջարկեց Սիբիրի նահանգների կառավարիչներին իրանց նախագահութեամբ և գլխաւոր վարչութեան ու ուրիշ վարչութիւնների պաշտօնեաների և գիւղատնտեսական ընկերութիւնների ներկայացուցիչների ժամանակցութեամբ կազմել առանձին խորհրդակցութիւններ՝ 1911 թ. համար գիւղատնտեսական ձեռնարկութիւնների մի ընդարձակ ծրագիր մշակելու համար։ Այդ նպատակով գլխաւոր վարչութիւնը բացի ամեն տարի յատկացվող 180,000 բուբլուց, խնդրում է լրացուցիչ գումար 660,000 ր.։

ԲՈՒԶՈՒԼՈՒԿ։ Նոր սիստեմով վառելիք գործածելու ժամանակ անզգուշութիւնից ուժեղ քամու ժամանակ հրդեհ ծագեց երկաթուղային դէպոյում։ Շինութեան մէջ մացին 11 շոգեմեքենաներ։ Կրակը չեզոքացրին։ Վնասը էկաւ միլիոն է։ Գնացքերի երթևեկութիւնը կանգ է առել։

ՄՕՐԱՎԵԱՆ ԿՂԶԻՆԵՐ։ Լրագրական տեղեկութիւնների համաձայն, այստեղ ապրող մի քանի հարիւր ռուսահպատակներ, գլխաւորապէս հրէաներ, աքսորվել են Աստրիա, հասարակական կարգ ու կանոնի և հանգստութեան համար վտանգաւոր լինելու համար։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒԼ։ Նահանգական ժողովը խալերայի վրա ծախսած 440,000 բուբլին մտցրեց 1911 թւի նախահաշիվի մէջ և միջնորդում է կառավարութեան առաջ վերադարձնելու 250,000 ր. և տալու 200,000 ր. խալերայ երևալու դէպքում կռիւ տղելու համար։

ԳԱԳՐԻ։ Տաք ու պարզ օրեր են։ Արևում տաքութիւնը հասնում է 30 աստիճանի ըստ Ցէլսիուսի։ Շատ վարդեր ծաղկում են։

ԼԻԲԱՎԱ։ Գազային գործարանում գազի պայթումից ջարդվեց մեքենան։ Վնասվեցին 3 մարդ։ Ամբողջ քաղաքը և շատ խանութներ ու ընկերարաններ մացել են առանց լուսաւորութեան։

ՄՕՍԿՎԱ։ Փակվեց առևտրական ծառայողների ընկերութիւնը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒԼ։ Նահանգական զէմստվային ժողովը որոշեց գարնանը գումարել հարաւ-ռուսական շրջանային համագումար խալերայի դէմ կռուելու առիթով։ Խալերայից մեռածների որբերի խնամատարութեան համար յատկացվեց 5,000 ր., վարակիչ հիւանդութիւնների հիւանդանոց Իզոլկայում կառուցանելու համար՝ 20,000 բուբլի։

ԽԱՐԿՈՎ։ Հանքարդիւնաբերողների համագումարում պարզվեց, որ խալերայից բարձրային արդիւնաբերութիւնը ջնջվեց 7 միլիոնից աւելի։

ԴԵՐԲԵՆԴ։ Երէկ ցերեկվայ ժամը 3-ին և այսօր գիշեր զգացվեց թեթև երկրաշարժ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Բ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմուած 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ՆԵՐԿԱՅՈՒՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Հրաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—133

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԻԼՈՐԳԻԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինսկայա փող. № 8
(Կ. հ.) 564. 100—68

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ԶԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր { Առաւօտ. ժ. 9—12
Երեկոյ. ժ. 5—7
(Ե.հ.կ.) 1254. 100—13

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (Երեվանցիների)
5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 388.
(Ե.հ.կ.) 909. 100—54

ՖԷԼԴՇԷՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԳԻՏԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Կատարում է սրսկումներ, վէրքի փաթաթում, դեղերի քսում (втираніе) և այլն։ Բժշկութիւն տալարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի։ Մասաժ էլեքտրական և ձեռքով։ Բժշկական մարմնամարզութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Հրաւորներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը։ Վօրոնցովի արձանի մօտ, Семеновская ул. № 9.

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ գրախանութում վաճառվում են հետևեալ պիէսները.

«Ղաչաղ Արսէն», դրամա 3 գործ., Մօշխուբարիձէի	20 կ.
«Եւգինէ», դրամա 3 գործ., Շիրվանզադէի	50 կ.
«Հիդրա», դրամա 5 գործ., Թ. Փափազեանի	50 կ.
«Կրոթ-կրոթ», վոդեվիլ 1 արար., Մաղաթեանի	25 կ.
«Սխալ հաշիւ», կոմէդիա 4 գործ., Երիցեանի	50 կ.
«Սօնայի նշանդրէքը կամ մօցիքուլի վրէժը», Եսայեանի	15 կ.
«Արիւնի Աւետարանը», Թ. Զաւէնի, դրամա 1 գործ.	25 կ.
«Օտելլո», ողբերգ. 5 արար., Շէքսպիրի, Թ. Սուլխանեանի	60 կ.
«Աւազակներ», Շիլլէրի, Թ. Փ. Վարդանեանի	50 կ.
«Պատուի համար», դրամա 4 գործ., Շիրվանզադէի	60 կ.
«Դաւաճանութիւն», Սումբատով, Թ. Ա. Ծատուրեանի	50 կ.
«Տրիլբի», դրամա 4 գործ., Թ. Լ. Մէլիք-Ադամ.	25 կ.
«Մեծն Վարդան», ողբերգ. 5 արար., Տիրացեանի	50 կ.
«Զուլհակներ», դրամա 4 գործ., Հաուպտմանի, Թ. Արտեմեանի	40 կ.
«Եադ-Աստ», վոդեվիլ 2 պատկերով, Ղազարեանի	25 կ.
«Ժողովրդական թատրոն», ժողոված Ա. և Բ. 12 պիէս, Արաքսեանի	2 ր. —
«Դրամատիկական էտիւդներ», 5 պիէս մի գրքոյկում, Մ. Մանուելեանի	35 կ.
«Սիբիրականը», Ցազարելիի, դրամա 4 գործ., Թ. Միրզայեանի	50 կ.
«Եսի մարդը», դրամա 5 արար., Շանթի	60 կ.
Միբրօ՝ «Գործը գործը է պահանջում», կատակ 3 արար., Թ. Զալալեանի	40 կ.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“, Г. И. Галустяну.
(Օ. մ.) 1360. 2—2

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարդի Բիւրեղեայ
Օճառ № 4711
ԱՆՊԱՏՄԱՆ ԱՆԷՐԱԾԵԼԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՐԵՍԻ ԳՈՑՆԻ ԲԱՑԻՕՆԱԼ, ՀՈՏԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։
Կտորը 25 կօպ.
Ծախվում է ամենուրեք
ԻՕԿԱՆԸ № 4711
միայն մարկայով
ՖԷՐԴ. ՄԻԼԼԷՆՍ
Գ. ՔՈԼՈՆ
№ 4711
(30,դ.9,21) (М.339825) 1221. 3—2

Լոյս տեսաւ
ԱՐՄՅԱՆՈ-ԳՐԻԳՈՐԻԱՆՍԿԻ
КАЛЕНДАРЬ
НА 1911 ГОДЪ
կազմեց Մ. քահ. Տէր-Յովհաննիսեանց
Գինն է 20 կ.
Դիմել՝ Ставрополь губ. Священ. С. Теръ-Ованнесьянцу.
(Օ.մ.) 1373. 2—1

ՂԶԼԱՐԻ հայոց ս. Աստուածամօր եկ. համար ճարակաւոր է
ՄԻ ԺԱՄԱՍԱՅ ՍՊԱՍԱՒՈՐ,
որը միևնոյն ժամանակ պիտի վարի և հոգևոր կառավարութեան քարտուղարի պաշտօնը, քաջ գիտենալով ատենական ձևը։ Պայմանների մասին դիմել նոյն կառավարութեան։
Հասցէն՝ Кизляръ, (Терск. обл.), Арм. дух. Правленію.
(Հ. կ.) 1334. 5—3

Լոյս տեսաւ և վաճառվում է
Լ. ՏՕԼՍՏՕՅԻ
Տէր ու բանւորը
Թարգմ. Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ
Գինն է 20 կօպ.։
Պահեստը «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ (Օ.մ.) 1361. 3—2

ՂԱՐԱՔԱԼԻԼ գիւղի համար հարկաւոր է
ՄԻ ՏԻՐԱՑՈՒ
Արդիւնքն է մօտ 250 բուբլի։ Ցանկացողը կարող է դիմել այս հասցէով. Черезъ Кизляръ, въ село Карабагло. Армянскому священнику Каспару Мѣдникянцу.
(Ա. օ.) 1364. 2—2

ТИПОГРАФІЯ „ЭКОНОМІЯ“
Ав. Мугдусіакопова
съ С-ми въ Тифлисѣ
Исполняетъ срочно, аккуратно и чисто, по возможности дешево с лѣдующія работы: возовъ для самыхъ крупныхъ и мелкихъ заказ до самыхъ большихъ журналовъ, газетъ, брошюръ, объявленій, визитныхъ карточекъ. и т. д.
№ 228 ТЕЛЕФОНЪ
ТИФЛИСЪ, Большая Ванкская ул., № 3, домъ Ризева.

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան
գրասենեակում ծախվում են Ա. Ի. ՊՕՂՈՍԵԱՆԻ հրատարակած հետևեալ գրքերը.

Ժողովրդական պատմուածքներ ա. պրակ Լ., Տոլստոյի	30 կ.
բ. Թարգմ. Ա. Մ.	20 կ.
Ինքնակոչ իշխանը Վ. Հաւֆի, Թարգմ. Շ. Տէր Նիկողայոսեան	10 կ.
Պատմուածքներ կենդանիների կեանքից (պատկերազարդ)	40 կ.
Փնջիկ (երգարան) Ա. Մանուկեանի	30 կ.
Սուրբ Մեսրոպ Լէօի	75 կ.

Գումարով գնողներին՝ 25-ից մինչև 50 օրինակ՝ 30% զեղչ.
50 — 100 40% »
100-ից աւել 50% »
(Հ.) 1372. 2—1

Въ 1911 г. подписчики издающагося 9-й годъ журнала
БЕЗЪ ПЕРЕС. 8 Р. (Редакторъ-издатель В. В. БИТНЕРЪ) СЪ ПЕРЕС. 9 Р. ВЪ ГОДЪ
Вѣстникъ Знанія
получатъ: 12 кн. ежемѣс. иллюстриров. журнала „Вѣстникъ Знанія“
отдѣлы: естественно-научный, историко-географич., социально-экономич. философіи, математ. и психологія, критическаго богословія, педагогическій, литературно-худож.-критическій, сельско-хозяйств., нов. изобрѣт., воздухоплав., юридич., медицинскій. Познанія Россіи. Сотрудники: профессора высш. учебн. заведеній и извѣстн. литераторы (см. подр. объявл.).
ИСТОРІЯ РОССІИ Н. Костомарова, въ 14 (полная) вып.
(въ книжныхъ магазинахъ стоитъ 8 р., съ перес. 9—10 р.)
17 кн. по всѣмъ отраслямъ знанія: Проф. И. Х. Озеровъ. КУДА МЫ ИДЕМЪ? Лекціи по міровой экономикѣ. Проф. И. Скворцовъ. ГЕОФИЗИКА. Проф. И. Скворцовъ. БІОЛОГІЯ и ПСИХОФИЗІОЛОГІЯ (2 ч.). Проф. Гартманъ. КОСМОГРАФІЯ (Астрономич. географія). Проф. Козловскій. ЛЕКЦІИ ПО СОВРЕМЕН. ФИЛОСОФІИ (2 кн.). Бельшенъ. ТВОРЧЕСТВО и РАЗРУШЕНІЕ въ РЕВОЛЮЦІИ. Проф. Котляревскій. О СМЕРТИ. А. Николаевъ. ПАЛИ ЦѢПИ ТЯЖЕЛЫЯ. Освобожденіе крестьянъ. Инж. П. и К. КАНЪ. САМОМУ ПОСТРОИТЬ ЛЕТАТЕЛЬНЫЙ АППАРАТЪ. Проф. Форель. ПОЛОВАЯ ЖИЗНЬ. Мате и Фраппье. КЛЮЧИ РАЯ и АДА (истор. религ. вѣрованій). Акад. В. Бехтеревъ. О ГИПНОТИЗМѢ. Проф. Бранъ, Цигларъ и др. РАДІЙ. Д-ръ А. Пайнъ. БОЛѢЗНИ и ИХЪ ЛѢЧЕНІЕ (Кр. Медицинск. Энциклопедія). С. Исаковъ. ПО МУЗЕЯМЪ и КАРТИНН. ГАЛЛЕРЕЯМЪ (Съ альбомомъ худож. произвед.). В. Бельше. О ТАЙНАХЪ ПРИРОДЫ. Проф. Тимофеевъ. ред. ИСКУССТВО ГОВОРИТЬ ПУБЛИЧНО. Кр. ПРАКТИЧЕСКІЙ САМОУЧИТЕЛЬ ЯПОНСКАГО ЯЗЫКА, подъ ред. лект. Им. СПБ. универс. Іосифуми Куроно.
3 вып. ПРАКТИЧЕСКОЙ ЭНЦИКЛОПЕДІИ.
Ремесла, кустарн. промыслы, доходныя производства, строит. и сельско-хоз. работы, полезн. рецепты и пр.
6 ЛИТЕРАТУРНЫХЪ АЛЬМАНАХОВЪ.
52 №№ еженед. общественно-политическ. и литературной, съ иллюстраціями газеты НЕДѢЛЯ „Вѣстника Знанія“ съ отдѣломъ Взаимопомощи читателей, отвѣтами юридическ., сельско-хоз. и пр. Направленіе прогрессивно-демократическое, безпартійное.
Цѣна (52 кн. и 52 №№ газеты)—9 руб. въ годъ съ перес., безъ пер.—8 р., за границу—12 руб. Нар. учит., фельдш., псаломщ., вол. пис. получ. журн. за 8 руб. при взносѣ не менѣе 3 р. до 20 дек. Нов. подп., вносящіе полную годов. плату до 10 дек., получ. ПРЕМІЮ—. Наст. справочн. книгу“ на 1911 г. (Газета „Недѣля“ отдѣльно—ц. 3 руб. въ годъ). Подробн. объявленіе выс. безплатно. Адресъ: Гл. Конт. «Вѣстн. Зн.», СПБ. Невскій пр., 40.
Условія разсрочки: при подпискѣ 3 руб., 10 марта, 10 іюня и 20 августа по 2 руб. Адресъ Главн. Конторы „Вѣстника Знанія“: С.-Петербургъ, Невскій пр., 40
(Հ.) (П 132008) 1367. 2—1

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
ԼԻԱԿԱՏԱՐ
ՀԱՅ-ՌՈՒՍ ԲԱՌԱՐԱՆ
Լոյս տեսաւ ՀԱՅԱԿԱՏԱՐ ստուար պրակ։
Բառարանի բաժանորդագինը 6 ր. և 5 ր. Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրվել «ԳԻՐ» գրախանութում (Вельяминовская, 7). Նոյն հեղինակի Լիակատար Ռուս-Հայ Բառարան, գինը 8 ր., կազմած 9 ր.։ Դիմել՝ Հ. Դաղբաշեան Тифлисъ, Евангуловская ул. № 8. II էտ.
(Ե.հ.) 1362. 2—2

ԿԱՊԱԼՈՎ ՏԱԼԻՍ ԵՄ
ՄԻ ՀՈՂԱՄԱՍ
որ գտնվում է Թիֆլիս քաղաքի սահմաններում, 5 դեսեատին տարածութեամբ, ոռոգման ջրով, հին այգիով և շինութիւններով։ Հողամասն ընկած է հարթավայր տեղում, պիտանի է մրգատու ծառեր տնկելու, բանջարաբուծութեան, ջերմոցների, մեղուանոցի, թռչուններ պահելու համար և այլն։ Պայմանների մասին տեղեկանալ՝ Եւլիզավետինսկայա փող. № 94, բնակարան գիշերանտես Տիմոֆէյևի։
(Օ. մ.) 1370. 3—1

ԲԱՑՎԱԾ Է 1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՀԱՍԿԵՐ“
(Եօթերորդ տարի)
Մանկական պատկերազարդ ամսագիր
Անմիջական ղեկավարութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և մշտական աշխատակցութեամբ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ։
1911 թւին «ՀԱՍԿԵՐ»-ի յաւելուածները լինելու են՝ 2 պատկերազարդ հէքիաթ. 2 պատկերազարդ պատմուածք, 1 մանկական պիէս, 2 բնագիտական զրոյց, 2 հասարակական-ժողովրդական աւանդութիւն, 3 մանկական վէպիկ, պատմուածք ու պիէս և 2 պրակ «Մանկավարժական գրադարան» ընտանեկան կրթութեան կարևորագոյն հարցերին նուիրված։
Բաժանորդագինն է հանդարձ յաւելուածներով.

Տարեկան	4 ր.	Առանց յաւելուածների	3 ր.
Ամսական	— 35 կ.	» »	— 30 կ.
Պարսկաստանում	4 ր. 50 կ.	» »	3 ր. 50 կ.
Արտասահման	12 ֆր.	» »	9 ֆր.
Սկզբից (1905 թ. սեպտ. մինչև 1911 թ. վերջը)	16 ր.	» »	12 ր. 50 կ.

Ապարիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Խմբագրութեան հասցէն՝ Թիֆլիս, Բէբուտովսկայա փող. № 25. Тифлисъ, Ред. журнала „Аскеръ“. Tiflis. (Caucase) Rédaction du journal «Hasker».
Թիֆլիսում գլխաւոր պահեստը «Գիր» գրախանութում. կարելի է գտնել նաև «Գուտտենբերգ», Բագուում „Сотрудникъ“, Երևանում Պետրոս Յովհաննիսեանի, իսկ Վլադիկավկազում՝ Դէյկարխանեանի գրախանութներում։
«ՀԱՍԿԵՐ»-ին աշխատակցելու են՝ Աղայեան Դ., Աղաբաբ Յ., Բաշինջաղեան Գ., Դեժիրճեան Դ., բժ. Ա. Զարգարեան, Իսահակեան Ա., Լէօ, Ծկոյեան Ս., Հայրապետեան Հ., Մարգար, Մելիք-Հայկազեան Հեղինէ, Մեսեան Գ., Միրիանեան Կ., Յովհաննիսեան Յովհ., Շիրվանզադէ, Զաւախեցի, Սարգսեան Նիկ., Սիմակ, Տէր-Նիկողոսեան Շուշանիկ, Փափազեան Վրթ. և այլն։
Խմբագիր հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան
(Հ. կ.) 1326. 6—4

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՅԹԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ!
ԳՐՊԱՆԻ ԳՐՈՂ-ՄԵՔԵՆԱՅ „TAURU“
Մինչև այժմ զուտ զոյութիւն չունէր այնպիսի մի յարմարութիւն, որ կարելի լինէր գրպանի մէջ պահել գրող-մեքենայ, որով մարդ կարողանար օգտվել ամենուրեք, այն է՝ տանը, երկաթուղային գնացքի մէջ, շրջեցիկում և այլն, որպիսի մեքենան մատուցանում է այն ծառայութիւնը, ինչ որ ամենամանրագին գրող-մեքենան, և մինչև իսկ գերազանց է համարվում վերջինից նրանով, որ կարելի է հետը շրջեցնել և ամեն ժամանակ ու ամենուրեք կարելի է գործադրել նրան։ Առաջ է գալիս իսկական մի հարց՝ թէ ի՞նչպէս գրվող է այդպիսի մի մեքենան։ Գիրն։ Ի պատասխանի դրան բացատրում եմ, որ, շնորհիւ տեխնիկայի զարգացման, հնարաւոր է եղել գրպանի գրող-մեքենայի (մեծութ. մի քիչ աւելի գրպ. ժամացույցից) կազմուածքը այնպէս կատարելագործել, որ մեխանիզմի շուրջը պարունակում է մօտ 100 արշ. թուղթ (ձեղ շերտով, նման հեռագր. թղթին)։ Հէ պահանջվում նախնական գիտութիւն. այրուրեին ծանօթը կարող է հէնց առաջին անգամից նրանով գրել, դնելով մատը ցանկացած տառի վրա և հուպ տալով, որից յետոյ խօսքերը տպվում են մանդամսան պարզ և անսխալ։ Համարձակվում եմ հաւատացնել, որ ով կը ստանայ „Tauru“ մեքենան, նա անշուշտ ընդմիշտ շնորհակալ կը մնայ ինձանից։ Խնդրում եմ մեքենային վերաբերվել լուրջ, ինչպէս իսկապէս գործնական և օգտակար մի տարբերակի, այլ ոչ թէ մանկական մի խաղալիքի։ Եթէ մեքենան դուր չը գայ, ՓՈՂԸ ՎԵՐԴԱՐՁՆՈՒՄ ԵՄ. բայց յոյս ունեմ, որ աւելի շուտ երկրորդ պատուէրը կը ստանամ, քան պահանջ՝ փողը վերադարձնելու։ Պատուէր ուղարկելուց խնդրում եմ յայտնել թէ ինչ լեզուի մեքենայ ուզարկել, որովհետև ամեն լեզուներով էլ մեքենաներ ունենք։ ԳԻՆԸ ՄԻԱՅՆ 7 ր. 50 կ.։ Ճանապարհածախքը՝ հանդերձ մաքսով 60 կ. (Միբիր 90 կ.)։ Ուղարկում ենք վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Հասցէն, որը կարելի է կարել եւ կպցնել ծրարին կամ բացակին.

ПАРИЖЪ № 154. PARIS
M-r STRUMFELD S. Rue Mirbel 2 bis.
Պատուէրներով կարելի է դիմել բոլոր լեզուներով։ Փակ նամակին կպցնել 10 կ. մարկա, իսկ բացիկին՝ 4 կօպ.։
(Հ.) (B. 93531) 1368. 2—1

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ
— ՊԱՀԱՆՋԵՑԻՔ ԶՐԻ —
ՆՇՈՒՇՆԵՐԸ և գները բարձր, միջակ և ցածր տեսակի ԱԼԻՒՐՆԵՐԻ՝ կրուպչատկա, սեաճկա, բազմոլ, նաև զանազան պէսակ ՀԱՅԱՀԱՏԿՆԵՐԻ։ Ունեմ յայտնի ֆիրմաներից ներկայացուցչութեան իրաւունք և պատրաստում եմ ալիւր իմ սեփական ցորենից զանազան կայարաններում։
Որոշ շրջանների համար տալիս եմ ներկայացուցչութեան իրաւունք։
Դիմեցէք՝ СТАВРОПОЛЬ-губ. Мисаку А. ФАЛАКЯНЦУ.
Հեռագրի հասցէ՝ СТАВРОПОЛЬ-губ. ФАЛАКЯНЦУ.
Ցարգանքով Մ. Ց. ՖԱԼԱԿԵԱՆՑ
(Հ. կ.) 124[illegible]. 18—11

Типографія „ЭКОНОМІЯ“, Большая-Ванкская № 3.